Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ.22 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի երաժշտության դաստիարակի (1դրույք), ֆիզկուլտուրայի հրահանգչի (1.5 դրույք), դաստիարակի (1.17 դրույք), լոգոպեդի (1.0 դրույք) և հոգեբանի (1.0 դրույք) թափուր հաստիքների համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. հունիսի 17-ից մինչև հուլիսի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. հուլիսի 19-ին՝ ժամը 13:00-ին, «Երևանի հ.22 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան, Գրիբոյեդովի 2/2 :

Տեղեկությունների համար զանգահարել /010/23 6494 հեռախոսահամարով: